ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

ՃՇՀԱՀ-ի ՃՏՊ ևԺ ամբիոնի ասպիրանտ ***<u>Մազեն Իբրահիմ Սայիդի</u>*** *«Սիրիայի Դամասկոս Քաղաքում փոխակերպվող (Դինամիկ) ճարտարապետության ադապտացիայի խնդիրները»* թեմայով ատենախոսության վերաբերյալ , ներկայացված ԺԸ.00.01 *«Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:*

Ասպիրանտ Մազեն Իբրահիմ Սայիդի ատենախոսության թեման միջազգային արդի և ժամանակակից ճարտարապետության կարևորագույն հարցերից է: Թեմայի գաղափարական առանցքը ճարտարապետության մեջ պատմական ժառանգության ներգրավումն է, որ ներառում է նաև գլոբալիզացիան, երկրագնդի ներկայիս կլիմայական փոփոխություններն ու կայունության ստեղծման սկզբունքները: Փաստորեն, ներկայացվող ատենախոսության արդիականությունը նշված միջազգային թեմայի ճյուղային խորացումն է՝ Սիրիայի Արաբական Հանրապետության և առանձնապես Դամասկոս քաղաքի օրինակով:

Ատենախոսության նպատակը Դամասկոսի տիրող ճարտարապետական իրավիճակի բարելավումն է, որ կիզակետում է վերցնում հատկապես վերափոխվող ճարտարապետության հնարավորությունների կիրառությունը: Ատենախոսությունը բաղկացած է 141 էջից, այդ թվում և՝ ներածությունից, երեք գլուխներից, ընդհանուր եզրակացություններից, արաբերեն և օտար լեզուներով հրատարակված 75 անվանումով գրականության ցանկից, ինչպես նաև 82 իլյուստրատիվ պլանշետներ բովանդակող հավելվածից:

Ատենախոսության տրամաբանական հենքը: Սկզբում ներգրավում է թեմայի պատմական, տեսական և փորձնական կյանքի տեղեկատվությունը: Այնուհետև փաստագրավերլուծական մոտեցմամբ ամրագրվում են վերափոխվող ճարտարապետության տիպաբանական, հորինվածքային, ինչպես նաև շինարվեստի տվյալները: Հաջորդաբար վերոհիշյալ տեղեկատվությունն ու տեխնիկական առանձնահատկությունները մանիպուլացվում և ադապտացվում են

Դամասկոս քաղաքի գոյություն ունեցող կառուցապատման իրադրությունում՝ նպաստելով թեմայի կրիտիկական խնդիրների բարձրացմանը:

Ատենախոսության գիտական խնդիրները արտացոլված են ստորև նշված գլուխների վերլուծություններում:

<u>Առաջին գլխում</u> ներկայացվել են Դամասկոսի պատմական աշխարհագրությունը, լանդշաֆտն ու քաղաքաշինությունը- հին և նոր բնակելի թաղամասերի կառուցապատումը, դրանցում եղած կարևորագույն շենքերի ու համալիրների ճարտարապետությունը: Գլխում առանձնապես մանրամասնվել է «Ալ Ռազի» թաղամասի վերակառուցումը, որտեղ ուշագրավ է պատմական և ճարտարապատական տեղեկատվության օրգանական միահյուսվածությունը: Քաղաքաշինական առումով կարևորում եմ գլխի 4-րդ ենթամասում շարադրված հին և նոր քաղաքաշինության ինտեգրացիայի վերլուծական մեկնաբանությունը: Նույնպիսի մասնագիտական ներկայացման ուժ ունի նույն գլխի 5-րդ մասում ներկայացված Դամասկոսի բնակելի ճարտարապետական ժառանգության փաստագրավերլուծությունն ու դասակարգումը:

<u>Երկրորդ գլխում</u> հակիրճորեն ամրագրվել են ճարտարապետական վերափոխության կիրառական սկզբունքները: Ընդհանրապես ներկայացվել են կինետիկ և դինամիկ ճարտարապետության զարգացման մեթոդներն ու դեմքերը (Բակմինիստեր Ֆուլլեր, Վիլլյամ Ցյուկ, Խոսե Լիոնիդաս Մեխիա, Սառա Բոնմեյսոն, Քրիստին Մեյսին, Դ՝Արսի Թոմսոն և այլք): Ներկայացվել են «ձևաբանական ադապտացիայի» և «արձագանքող (ռեսպոնսիվ)» ճարտարապետության, «բիոմոնիկայի» սկզբունքային տեսակների սահմանումները և այլն: Փաստորեն կինետիկ ճարտարապետության սկզբունքները դասակարգվել են ծավալատարածական հետևյալ վերափոխումներով՝ 1. փոփոխելի տեղադրությամբ կամ շարժունակությամբ շինություններ, 2. դեմոնտաժվող շինություններ, 3. շարժական շինություններ, 4. փոխադրելի շինություններ, 5. փոփոխելի երկրաչափությամբ կամ տրանսֆորմատիվ շինություններ, 6. ոչ կարծր ֆորմաներով շինություններ, 7. կարծր և փափուկ համադրությամբ շինություններ և այլն: Սա է այն նոր բառապաշարը, որի միջոցով փոխակերպվում է պատմական

ժառանգության ձևաբանական ամբողջությունը և դրանք բացի ֆունկցիոնալ դասավորություն լինելուց՝ միջավայրի դինամիկ-ադապտիվ կոբինացիաներ են։ Վերջիններիս մեջ մեծ կարևորություն ունեն՝ « Կենսամիմետիկ տեխնոլոգիաները» կամ կինետիկ ճակատները, որոնք վերևի ձևափոխություններում նշվել էին որպես բիոմոնիկա։ Դրանք բնության իմիտացիան լինելով ընթանում են էներգոկոնսերվատիվ և կայունության ներմուծման սկզբունքներով (տես էջ 77) ։ Ակնարկվող ենթագլխի շրջանակներում հակիրճ անդրադարձ է կատարվել նաև «սմարտ (խելացի)» նյութերի ճարտարապետական կիրառությանը։ Դրանք փաստորեն սենսորային տեխնոլոգիաների ազդեցությամբ արձագանքում (վերածվում) են միջավայրային գրգռիչների (տես էջ 79)։ Իրականում սա է կինետիկ ճակատների կառավարումը բովանդակ ձևերի շարժման միջոցներով (բացվել, փակվել, պտտվել, մեծանալ, առկայծվել, հիդրավլիկ ռեվերանսներ և այլն)։ Հենց այս սկզբունքներով են դասակարգվել ճակատային վերափոխվող կոնստրուկցիաները, որոնք կրում են՝ խելացի, մեդիա, էլեկտրական շարժիչներով կինետիկ ճակատներ, խելացի նյութերից պատրաստված ճակատներ որակական բնութագրումները։ Գլխում առանձնապես շահեկան են շարադրանքին ընկերակցող ժամանակակից ճարտարապետության հուշարձանների էքսկուրսերը (տես էջ 87-90)։ Եթե տվյալ՝ երկրորդ գլխի նախորդ երկու կետերը շենքերի վերափոխումներին է վերաբերում, ապա հաջորդ մասում շարադրված են նոր նախագծվող վերափոխումներով շենքերը։ Սկսելով Լիոնարդո Դավինչիի փորձերից, այստեղ ներգրավվել են Ռեսպոնսիվ ճարտարապետության հեղինակները (Բիսլի, Հիրոսու, Ռակստոն, Տրանկլ, Տըրնըր և ուրիշներ)։ Փաստորեն տվյալ դեպքում կիզակետում են վերցվել շենքերի տանիքային մակարդակի ծավալտարածական վերափոխվող կառուցվածքները և այլն։

<u>Աշխատության երրորդ գլխում</u> վերլուծվող ենթաթեմաներն են Դամասկոսի պայմաններում ՝ շենքերի և համալիրների ձևակերտման կամ վերափոխման սկզբունքները, այդ թվում և՝ գլոբալիզացիայի ազդեցությունը քաղաքի ժամանակակից ճարտարապետության զարգացման վրա, ժառանգականի և նորարարականի համադրումը, միջավայրում պասսիվ կայունության ստեղծումը և

այլն։ Գլխում շահեկան է դամասկոյան վերփոխվող ծրագրերի ներգրավումը ուսումնասիրության մեջ, ինչպիսիք են՝ 1.գլոբալիզացիայի դիրքերից վերանայվող «Ալ Ռազի» թաղամասի վերակառուցումը, 2.Դամասկոսի պատմական կորիզի պահպանության ծրագիրը, որի տեսական հետազոտություններն իրականացված լինելով սիրիացի գիտնականների կողմից, ԻԿՈՄՈՍԻ հայտնի Դամասկոսի վերակառուցման կոնվենցիան շրջանցվել է, 3. Դամասկոսի ապօրինի թե տարերային կառուցապատված թաղամասերի կարգավորող ծրագրերը, այդ թվում են՝ Բարզեհ, Ռուկն էլ Դին, Ալ Մուհաջրին , Մազզեհ 86 թաղամասերը։ Վերջիններն այսօր ընթացիկ լինելով՝ դեռևս կարիք ունեն ինֆորմացիայի ընդհանրացմանը։ Այնուամենայնիվ նշենք որ հարցը ատենախոսությունում արտացոլված է իր վերջին տվյալներով, որոնց կապակցությամբ կատարվել են զանազան ռեկոմանդացիաներ, այդ թվում ն՝ վերափոխվող ճարտարապետության տեսանկյունից և այլն։

<u>Ընդհանուր եզրակացություններում</u> ամրագրված է ատենախոսության թեզը, առ այն, որ Դամասկոսի ճարտարապետության ներկայիս վերափոխումը պետք է իրականացվի կինետիկ և դինամիկ ճարտարապետական տեսակետների կիրառությամբ։ Թեզը ներկայացվել է իր պատմական, քաղաքաշինական, ավանդական ճարտարապետական պահպանության, ապօրինի կառուցապատման տարածքների նորացման, նոր նախագծային սկզբունքների կիրառության համալիր հարցերով, այդ թվում և հիմնականում՝ կինետիկ ճարտարապետության ներգրավվածությամբ։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մազեն Իբրահիմ Սահդի աշխատությունը բարձր գնահետելով հանդերձ, առանց նշելու զանազան մանր դիտողությունները, առանձնապես կուզեի անդրադառնալ դրանցից մեկին։ Խոսքը վերաբերում է ներդրված դամասկոսյան օրինակների վերլուծությանը։ Դրանք աշխատությունում ունենալով հանգամանալի մեկնաբանություններ, չունեն գոյություն ունեցող ծրագրերի մասնագիտական փաստագրությունը, որ ատենախոսությունը համոզեցուցիչ

դարձնելու գործում մեծ կարևորություն ունի։ Նկատելիորեն ատենախոսության գրաֆիկական մասը վերանայման կարիք ունի։ Փաստորեն նման հիմնավոր աշխատությունը՝ և՛ ռեֆերատի մասում և՛ ատենախոսության ներածականի մասում հարկ է ունենար ընդհանուր գիտահետազոտական սխեմա։ Այնուհետև աշխատությունում ընդգրկված դամասկոսյան քննական օրինակները պետք է ներկայացվեին ըստ արժանվույն և ոչ թե ավարտվեին միայն մի քանի տեսական հղումներով։

Կատարված է մեծ և բովանդակալի աշխատանք, որ մի ողջ ինստիտուտային ծրագրի տարողություն ունի։ Մազեն Իբրահիմ Սաիդի ատենախոսությունը ընդգծված որոնողական բնույթ ունի, որ բազմաթիվ հաջողությունների հետ կարող է ունենալ վիճարկելի հարցեր ևս, որոնք կարող են հետագա հաջողությունների գրավականը լինել։ Փաստորեն թեման չափազանց ակտուալ է, այն ընտրված է Սիրիայի սոցիալտնտեսական պայմանների քաջ իմացությամբ։ Ատենախոսության նորույթը աներկբայելի է։ Թեման հեռանկարային և ուսուցողական է և՛ պրակտիկ, և՛ տեսական առումներով։ Ատենախոսության հրատարակությունները արտացոլում են ներկայացվող թեզի կարևորագույն դրույթները։ Սեղմագիրը (որոշ վերապահումով) համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը։ Ատենախոսությունը գրված է գրագետ և բանիմացությամբ։

Արդյունքում՝ գտնում եմ, որ Մազեն Իբրահիմ Սաիդի ատենախոսությունը կայացած գիտական աշխատություն է և հեղինակը միանգամայն արժանի է հայցվող ԺԸ 00.01 «ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանին։

Պաշտոնական ընդդիմախոս, ՃՇՀԱՀ-ի

ՃՊՏ և Ժ ամբիոնի պրոֆեսոր, ճարտ. դոկտոր
Դ.Գ. Քերթմենջյան

ՃՇՀԱՀ-ի գիտական քարտուղար

տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ
Լ.Հ.Լևոնյան

Ք. Երևան.....2023 թ.